

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ակադեմիկոս Վ.Հ. Համբարձումյանի անվ. միջազգային գիտական մրցանակի շնորհման

I. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Հայաստանի ազգային հերոս, ականավոր գիտնական ակադեմիկոս Վ.Հ. Համբարձումյանի հիշատակը հավերժացնելու, ինչպես նաև նրա գիտական ժառանգության զարգացումը խթանելու նպատակով, ՀՀ Նախագահի կողմից սահմանվել է Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վ.Հ. Համբարձումյանի անվ. միջազգային գիտական մրցանակ ԱՄՆ 500000 դոլարին համարժեք դրամի չափով:
- 1.2. Ակադեմիկոս Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակը շնորհում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:
- 1.3. Ակադեմիկոս Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակի շնորհման վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են ՀՀ ԳԱԱ Նախագահությանն առընթեր հատուկ Միջազգային Հանձնաժողովի կողմից, որի կազմը սահմանվում է ՀՀ ԳԱԱ Նախագահության ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Կառավարության առանձին որոշմամբ:
- 1.4. Ակադեմիկոս Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակը բաղկացած է դրամական վարձատրությունից, Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակի դափնեկրի դիպլոմից, պատվոնշանից (մեդալից) և դրա ինքնության հավաստագրից:
- 1.5. Ակադեմիկոս Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակը շնորհվում է աշխարհի ցանկացած երկրի գիտնականներին աստղաֆիզիկայի, ինչպես նաև Վ.Հ. Համբարձումյանի գիտական գործունեության հետ կապված՝ դրան հարակից ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառներում բացառիկ գիտական աշխատանքների համար:
- 1.6. Մրցանակը հայցելու համար կարող է ներկայացվել մեկ հեղինակի կամ հեղինակների խմբի (3 հոգուց ոչ ավելի) աշխատանքը: Ըստ որում դրամական վարձատրությունը հավասարապես բաժանվում է հայցողների միջև, իսկ դիպլոմը, պատվոնշանը և հավաստագիրը հանձնվում է յուրաքանչյուր հայցողին:
Մրցանակը կրկին անգամ դափնեկիրներին չի տրվում:
- 1.7. Մրցանակը շնորհվում է 2 տարին մեկ անգամ և առաջին մրցանակային տարին համարվում է 2010թ.:
- 1.8. Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակի հայցողների շրջանում արժանի թեկնածուների բացակայության դեպքում նշված մրցանակը այդ տարի չի շնորհվում:

II. Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակի հայցման համար աշխատանքների առաջադրում

- 2.1. Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակի համար աշխատանքների առաջադրման իրավունքը վերապահվում է՝

- Նորբեյան մրցանակի դափնեկիրներին,
 - գիտությունների ազգային ակադեմիաների Նախագահություններին,
 - աստղադիտարանների գիտական խորհուրդներին,
 - համալսարանների համապատասխան ամբիոնների խորհուրդներին:
- 2.2. Չի թույլատրվում անհատի առաջադրումը Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակի հայցման համար այն դեպքում, երբ նրա ներկայացրած աշխատանքն արդեն շահել է միջազգային մեկ այլ (խոշոր) մրցանակ կամ միաժամանակ ներկայացվել է միջազգային այլ (խոշոր) մրցանակի հայցման համար:
- 2.3. Մրցանակի հայցման համար ներկայացնող կազմակերպությունները ներկայացնում են`
- առաջադրման պաշտոնական նամակ` հստակ կերպով նշելով, թե որ նվաճման կամ նվաճումների համար է տվյալ անձն առաջադրվում,
 - աշխատանքի գիտական բնութագիրը և նրա նշանակությունը գիտության համար ընդգրկող հիմնավորված ներկայացում, հայցողների հրատարակված կամ այլ եղանակով հրապարակված գիտական աշխատությունների հավելվածով,
 - մանրամասն տեղեկություններ հեղինակի կամ հեղինակների վերաբերյալ, որպես կանոն` գիտական կենսագրություն (Curriculum Vitae – CV),
 - առաջադրված թեկնածուի գիտական հրապարակումների ցանկը,
 - երեք գրախոսների կարծիքներով ընդհանրացնող ծանոթություններ:

III. Աշխատանքների քննարկման կարգը

- 3.1. Աշխատանքները քննարկվում են ՀՀ Կառավարության կողմից ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) Նախագահությանն առընթեր ստեղծված` 9 հոգուց բաղկացած Միջազգային մրցանակային հանձնաժողովի կողմից:
- 3.2. Հանձնաժողովի կազմի 1/3-ը թարմացվում է 2 տարին մեկ անգամ:
- 3.3. Ընտրված աշխատանքները Հանձնաժողովն ուղարկում է փակ փորձաքննության միջազգային տարբեր գիտական կազմակերպություններին և առանձին մասնագետներին: Փորձաքննության արդյունքները շարադրվում են հիմնավորված եզրակացությունում: Յուրաքանչյուր ներկայացման համար պետք է ստացվի 2 եզրակացությունից ոչ պակաս, միմյանցից անկախ: Ներկայացումները, որոնց վերաբերյալ ստացվել են բացասական եզրակացություններ, չեն ներկայացվում Հանձնաժողովի քննարկմանը: Դրական և բացասական կարծիքների առկայության դեպքում աշխատանքն ուղարկվում է լրացուցիչ փորձաքննության:
- 3.4. Հանձնաժողովը, ստացված նյութերի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ` Հանձնաժողովի անդամների ձայների 2/3-ով ընտրում է Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակի դափնեկիրին: Եթե քվեարկության առաջին փուլի արդյունքներով հայցողներից և ոչ մեկը չի ստացել ձայների 2/3-ից ավելի, անց է կացվում քվեարկության երկրորդ փուլ: Եթե 2/3-ից ավելի ձայներ են ստացել մեկից ավելի թեկնածուներ, այդ հայցողների թեկնածության վերաբերյալ նույնպես անց է կացվում քվեարկության երկրորդ փուլ:
- 3.5. Հանձնաժողովի որոշումը հաստատում է Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից: Հանձնաժողովի նիստը համարվում է իրավասու, եթե

մասնակցում են անդամների 2/3-ից ոչ պակաս (ներառյալ հեռախորհրդակցությունների միջոցով մասնակցությունը):

- 3.6. Մրցանակը հանձնվում է յուրաքանչյուր զույգ տարվա սեպտեմբերի 18-ին (ակադեմիկոս Վ.Հ. Համբարձումյանի ծննդյան օրը) այդ առիթով գումարված ՀՀ ԳԱԱ Ընդհանուր ժողովում: Մրցանակը հանձնում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

IV. Աշխատանքների ներկայացման կարգը

- 4.1. Ակադեմիկոս Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակաբաշխության մրցույթին մասնակցելու մասին հայտարարությունը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներում և միջազգային գիտական ամսագրերում (ներառյալ Ինտերնետային կայք-էջերը) ոչ ուշ, քան մրցանակաբաշխության օրվանից մեկ տարի առաջ:
- 4.2. Աշխատանքները համապատասխան փաստաթղթերով ներկայացվում են մրցույթի մասին հայտարարությունից հետո 6 ամսից ոչ ուշ:
- 4.3. Մրցանակաբաշխության համար աշխատանքները ներկայացվում են անգլերեն լեզվով:
- 4.4. Փաստաթղթերն ուղարկվում են Հանձնաժողովի անունով, հետևյալ հասցեով՝ 0019, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Նախագահություն: Ակադեմիկոս Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակաբաշխության Միջազգային հանձնաժողով:

V. Ակադեմիկոս Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակի հայցման նյութերի քննարկման ընթացակարգի ապահովում

- 5.1. Հանձնաժողովի կազմակերպչական, տեղեկատվական, փաստաթղթային և իրավական ապահովումը կապված՝ Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակի հայցման համար ներկայացված նյութերի ընդունման, քննարկման և փորձաքննության հետ իրականացնում է ՀՀ ԳԱԱ Նախագահության ստորաբաժանումը՝ Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակի գրասենյակը (2 հաստիքային միավորով), որին վերապահված են Հանձնաժողովի գործունեության ապահովման գործառույթները:
- 5.2. Ակադեմիկոս Վ.Հ. Համբարձումյանի անվ. մրցանակի հայցողների փաստաթղթերի և կից նյութերի ընդունման, քննարկման և փորձաքննության, դափնեկրի դիպլոմի, պատվոցանի և հավաստագրի նախապատրաստման հետ կապված աշխատանքների ֆինանսական և նյութատեխնիկական ապահովումը, ինչպես նաև մրցանակի հանձնման արարողության կազմակերպումն իրականացվում է ՀՀ ԳԱԱ Նախագահության կողմից, այդ նպատակների համար բյուջեում նախատեսված բյուջետային հատկացումների հաշվին: